

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱՏՊՈՒԹՅՈՒՆԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ
(XIX դար – XX դարասկիզբ)

ՎԼԱԴԻՄԻՐ ՄԱՂԱԼՅԱՆ

Հայկական տպագրությունը Վրաստանում չնայած սկզբնավորվել է XIX դարի առաջին քառորդում, սակայն նրա նախահիմքերը պետք է որոնել XVII դարավերջի տասնամյակներում, երբ, ըստ Ամստերդամի քաղաքապետարանի դիվանական մի քանի փաստաթղթերի, Թիֆլիսում հայ-վրացական տպարան հիմնադրելու փորձ է արել վրաց Արչիլ թագավորը¹: Հետագայում նա դավաճանության մեղադրանքով պարսիկների կողմից արտաքսվում է Ռուսաստան և Մոսկվայում կարողանում է իրագործել իր վաղեմի իդր: Արչիլ թագավորը Ամստերդամից ստանում է իր պատվիրած վրացական տպագրատառերը և ռուսաց կայսր Պետրոս Մեծի թույլտվությամբ տեղի սինդրում վրաց համայնքի ուժերով 1703 թ. ստեղծում է տպարան, որը 1705 թ. լույս է ընծայում «Սաղմոսների» մի ժողովածու՝ վրացերեն տպագիր առաջին գիրքը Ռուսաստանում: Մոսկովյան այս տպարանի կազմակերպումից չորս տարի անց՝ 1709 թ., վրաց Վախթանգ VI փոխարքայի (հետագայում՝ 1716–1724 թթ.՝ արքա) նախաձեռնությամբ ու սեփական միջոցներով ոչ միայն Վրաստանում, այլև ամբողջ Կովկասում հիմնադրվում է առաջին տպարանը²: Այդ տպարանում էլ 1709 թ. լույս է տեսնում «Ավետարան», 1711-ին՝ «Սաղմոսներ», իսկ 1712 թ. Շոթա Ռուստավելու «Ընձենավորը» պոեմը՝ Վախթանգ արքայի խմբագրությամբ ու ծանոթագրություններով: Սրանք են տպագիր առաջին գրքերը վրաց հողի վրա³:

Վախթանգյան տպարանը, սակայն, կարճատև կյանք է ունենում, որոշ ընդմիջումներով այն գործում է մինչև 1722 թ., որից հետո հիմնահատակ կործանվում է օսմանցիների ու ղզլբաշիների՝ Վրաստան կատարած արշավանքների ժամանակ: Դրանից հետո Անդրկովկասում դարձյալ երկար ժամանակ ընդհատվում է տպագրական գործը: Միայն 1749 թ. վրաց Հերակլ II թագավորի և Անտոն Առաջին կաթողիկոսի նախաձեռնությամբ փորձ է արվում վերականգնելու օտար նվաճողների ձեռքով ավերված վախթանգյան տպարանը: Բայց վերականգնված այդ տպարանը նս չի բավարարում Վրաստանի օրեցօր աճող մշակութային ու քաղաքական պահանջները: Հերակլը ծրագրում է վախթանգյան շրջանի մաշված տառատեսակները

¹ Տե՛ս Ռ. Բ շ խ ա ն յ ա ն. Հայ գիրքը. 1512–1920, Երևան, 1961, էջ 137:

² Տե՛ս X. Գ. Պ ա ռ ա շ ի ճ շ շ. Первая типография в Грузии (1709–1722 гг.). Тбилиси, 1959, с. 79. Տե՛ս նաև՝ Դ. Լ. Վ ա տ օ յ շ Վ ի լ ի. У истоков грузинского книгопечатания.– «Феодоровские чтения – 1978». М., 1981, с. 328.

³ Տե՛ս Н. А. Б е р д з е н и ш в и л и, В. Д. Д о н д у а, М. К. Д у м б а д з е, Г. А. М е л и к и ш в и л и, Ш. А. М е с х и а. История Грузии, т. I. Тбилиси, 1962, с. 357:

փոխարինել նորերով: Այդ նպատակով նա Կոստանդնուպոլսից 1774 թ. Թիֆլիս է հրավիրում տպագրական գործի հմուտ կազմակերպիչ ու վարպետ, հայազգի Պողոս Հովհաննիսյանին, որը հետագայում՝ 1807 թ., հայ տպագրության պատմության մեջ հայտնի է դառնում Պողոս Արապյան (1742–1835) անունով⁴: Գործարկելով Թիֆլիսի տպարանը՝ նա մեկնում է Էջմիածին: Այս փաստը հաստատող, ինչպես նաև նրա տպագրական գործունեության, Թիֆլիսի և Էջմիածնի տպարանների հետ նրա ունեցած սերտ կապերի մասին բազմաթիվ տեղեկություններ ենք գտնում «Դիվան հայոց պատմության» մատենաշարի առաջին գրքում⁵:

Ամենայն հավանականությամբ, հենց այդ ժամանակ էլ հայ մտավորականությունը գիտակցում և մտածում է Պողոս Արապյանի աջակցությամբ Թիֆլիսում հիմնադրել նաև հայկական տպարան, մանավանդ, որ Արապյանն իր հետ Կ. Պոլսից բերել էր հայկական տառատեսակներ: Սակայն վերահաս քաղաքական իրադարձությունները, Աղա-Մահմեդ խանի արշավանքը Թիֆլիս ոչ միայն խանգարում են իրականացնելու այդ ծրագիրը, այլև 1795 թ. արշավանքի ժամանակ հրդեհվում և հիմնովին ավերվում է Թիֆլիսի միակ տպարանը:

XIX դարամուտին Անդրկովկասում տեղի են ունենում քաղաքական մի շարք խոշոր իրադարձություններ. 1801 թ. Վրաստանը և Արևելյան Հայաստանի մի մասը միանում են Ռուսաստանին, իսկ 1828 թ. Ռուսաստանին է միանում նաև Արևելյան Հայաստանի մեծ մասը: Այդ ընթացքում Անդրկովկասի կենտրոնը, սոցիալ-քաղաքական ու մշակութային խոշոր հեղափոխականների հետևանքով ու աշխարհագրական նպաստավոր դիրքով, աստիճանաբար դառնում է Թիֆլիսը, որը դեպի իրեն է ձգում երկրամասի բոլոր ժողովուրդների մտավոր կարող ուժերը: Թիֆլիսը դառնում է Անդրկովկասի բազմազգ գրականության ու մշակութային, գրատպության, ինչպես նաև պարբերական մամուլի հրատարակման կենտրոն: Այստեղ, XIX դ. 2-րդ կեսին սկսում են արմատավորվել կապիտալիստական արտադրահարարությունները, որոնք էլ նոր թափ են հաղորդում երկրամասի տնտեսական, սոցիալ-քաղաքական ու մշակութային կյանքի զարգացմանը:

Վրաստանը Ռուսաստանի կազմի մեջ մտնելուց հետո՝ 1802 թ. Ստեղծվում է Վրացական նահանգը: Նահանգի ղեկավար, ազգությամբ վրացի գեներալ Պ. Յիցիանովի (Յիցիշվիլի) անմիջական աջակցությամբ Թիֆլիսում 1804-ին⁶ վերականգնվում է 1795 թ. Աղա-Մահմեդ խանի արշավանքի ժամանակ հիմնահատակ ավերված վրացական տպարանը և այն, անցնելով նորակազմ ռուսաց կառավարչության իրավասության ներքո, համարվում է նաև ռուսական, հայկական ու ֆարսի տառատեսակներով: Ա-

⁴ Տե՛ս Թեոդիկ Տիպուտան, Կ. Պոլիս, 1912, էջ 65–70, նաև՝ Գ. Լևոնյան. Հայ գիրքը և տպագրության արվեստը, Երևան, 1958, էջ 138, 174–181, 185–188, 203, Ա. Բաբայան. Հայ գիրքը և տպագրությունը, Երևան, 1963, էջ 74–81, Ռ. Բշիսյանյան. Հայ գիրքը, Երևան, 1981, էջ 79–80, Լեոն. Երկերի ժողովածու, հ. 5, Երևան, 1986, էջ 602 և այլն:

⁵ Տե՛ս Դիվան հայոց պատմության: Նոր շրջան, գիրք առաջին, Ղուկաս Կարնեցի, հ. Ա (1780–1785), Երևան, 1984:

⁶ Տե՛ս Н. А. Бердзенишвили, В. Д. Дондуа, М. К. Думбадзе, Г. А. Меликишвили, Ш. А. Месхиа. Նշվ. աշխ., էջ 423: Այս տպարանի վերականգման տարեթիվը այլ աղբյուրներում նշվում է նաև 1805-ը:

առաջին հերթին այդ տպարանի հիմնական նպատակն էր՝ ցարական Ռուսաստանի օրենքներն ու տեղական իշխանությունների որոշումները տպագրելը, բազմացնելը և Վրաստանի ազգաբնակչության շրջանում իրենց մայրենի լեզուներով տարածելն ու ծանոթացնելը: Այդ տպարանում մինչև 1819 թ. ուրիշ ինչե՞ր են տպագրվել, այդ մասին այսօր ոչինչ ասել չենք կարող: Իսկ դրանից հետո այստեղ սկսում է տպագրվել վրացերեն առաջին թերթը՝ «Քարթուլի գազեթի»-ն, այս 1828-ից՝ «Տիֆլիսսկիե վեդոմոստի» ռուսերեն անդրանիկ պարբերականը Անդրկովկասում և այլն: Հետագայում այդ տպարանը հայտնի է դառնում «Տպարան Կովկասի փոխարքայի գլխավոր կառավարչության» անվամբ և, պաշտոնական հրատարակություններից բացի, տարբեր լեզուներով, այդ թվում՝ հայերեն, տպագրում է գրքեր ու պարբերականներ:

* * *

XIX դարում տպագրական արվեստը աննախընթաց վերելք է ապրում, գուտենբերգյան ձեռքի պարզ մեքենան իր տեղը զիջում է նոր, ավելի բարդ ու կատարելագործված արագատիպ մեքենային: Կատարելության են հասնում նաև գրաձուլման, տառատեսակների հարստացման ու ազնվացման եղանակները: Տեղի է ունենում լուսանկարի գյուտը, որը և նպաստում է ցինկոգրաֆիայի զարգացմանն ու տպատախտակների (կլիշեներ) պատրաստմանը: Ստեղծվում են նաև տողաշար (լինոտիպ), թուղթ մշակող ու կտրող, տպագրված մամուլները կարող մեքենաներ, որոնք հնարավորություն են տալիս ստանալու ամեն տեսակի ու որակի, ձևի ու չափսի տպագրական թղթեր: Այս ամենը մուտք է գործում Թիֆլիս, որն աստիճանաբար դառնում է նաև հայ գրականության ու արվեստի, տպագրության ու պարբերական մամուլի առաջատար կենտրոն ոչ միայն Անդրկովկասում, այլև ողջ Ռուսական կայսրությունում: Դրան նպաստում է նաև այն հանգամանքը, որ 1814 թ. Վրաստանի հայոց թեմի առաջնորդ է նշանակվում Ներսես Աշտարակեցին: Նա մտածում է Թիֆլիսում հիմնադրել մի կանոնավոր հայկական դպրոց, որի կարիքը զգացվում էր վաղուց: Ն. Աշտարակեցին իր վաղեմի այդ երազանքն իրականացնում է 1824-ին: Նա տեղի հայ հասարակայնության տրամադրած միջոցներով ու Մոսկվայից Հովակիմ Լազարյանի տրամադրած գումարներով կառուցել է տալիս մի շենք, որ վիթխարի դեր ուներ կատարելու Կովկասի հայոց կրթական գործում և որը հետագայում կոչվելու էր իր հիմադրի անունով՝ Ներսիսյան դպրոց: Նորաստեղծ այդ ուսումնական հաստատությունը, որ իր գոյությունը պահպանել է ուղիղ 100 տարի (1824–1923 թթ.), հայ գիտությանն ու մշակութին տվել է հարյուրավոր լուսավոր դեմքեր: Դպրոցի հիմնադիր Ն. Աշտարակեցին ուներ նրա բարգավաճմանը նպաստող շատ ծրագրեր: Մեծանուն պատմաբան Լեոն իր «Հայ գրքի տոնը» արժեքավոր աշխատության մեջ նշում է, որ Աշտարակեցին վաղուց մտադիր էր Վենետիկի Մխիթարյան վանքի նման մի գրական հիմնարկություն ստեղծել Հայաստանում: Այդ միտքը նա երազում էր իրականացնել իր հիմնադրած

դպրոցի միջոցով՝ այն դարձնելով մշակութային առաջատար կենտրոն⁷: Մակայն այդ ծրագիրն իրականացնելու համար առաջին հերթին անհրաժեշտ էր ստեղծել տպարան, որը հնարավորություն կտար նաև աշակերտությանը ապահովել ոչ միայն դասագրքերով ու ուսումնական ձեռնարկներով, այլև կտպագրեր արտալսարանային ընթերցանության գրքեր ու մեթոդական գրականություն: Այդ բանը նկատի ունենալով՝ Աշտարակեցին առաջին հերթին ձեռնամուխ է լինում դպրոցին կից տպարան ստեղծելու գործին:

Թիֆլիսում հայկական տպարան հիմնելու ազգօգուտ գործում, դեռևս դպրոցի շենքի կառուցումը չավարտած, Ն. Աշտարակեցուն օգնության է գալիս նրա վաղեմի բարեկամ ու համակիր, Վանից Թիֆլիս գաղթած ու իր առևտրական խոշոր գործարքներով ավելի հարստացած Գեորգ աղա Արծրունին⁸: «1817 թվականին իր առևտրական գործերով ճանապարհորդելով Արևմտյան Եվրոպայի քաղաքները, Արծրունին հասնում է Ամստերդամ, ուր տեղեկանում է, թե ինչ-որ հույանդացու մոտ հայերեն տպագրական տառեր կան պահված: Դրանք այն տառերն էին, որոնք դեռևս 1790-ական թվականներին պատրաստել էր տվել Առաքել Պողոսյան անունով մեկը և, չկարողանալով տպարան հիմնադրել, թողել էր անգործության մեջ: Գեորգ աղան, միջոցներ չխնայելով՝ ձեռք է բերում բոլոր ձուլված տառերը, ինչպես և նրանց հայերեն ու մայրերը, բերում հասցնում է Թիֆլիս և ընծայաբերում Ներսեսի նորակերտ ուսումնարանին»⁹:

Երբ է այդ տպարանը Գեորգ Արծրունին Ամստերդամից բերել, և արդյոք Թիֆլիսում մինչ այդ ուրիշ հայերեն տառերով տպարան գոյություն չի ունեցել: Այս հարցի պատասխանը մեզ տալիս է Ա. Երիցյանը: «Հարկ է ասել, գրում է նա, – որ եթե չհաշվել այն փոքրիկ մամուլը, որ կար ռուսաց զինվորական վարչության ձեռքում լոկ պաշտոնական թղթեր տպելու համար, այն ժամանակ սա պիտի համարվի Թիֆլիսի անդրանիկ տպարանը»¹⁰: Ասվածից պարզ երևում է, որ Թիֆլիսում Ներսիսյան դպրոցի տպարանի հիմնադրումից առաջ գոյություն է ունեցել հայերեն տպագրություն: Այդ հայերեն տպագրությունը կատարվել է, ինչպես նշում է Ա. Երիցյանը, ռուսաց զինվորական նորաստեղծ կառավարչության կազմակերպած վերոհիշյալ տպարանում: Թվում է՝ այս տպարանի գոյության փաստը ևս պետք է նկատի ունենալ, երբ խոսվում է Վրաստանում առաջին տպարանի հիմնադրման ու հայկական տպագրության սկզբնավորման մասին:

Գիտական գրականության մեջ ընդունված է, որ Ներսիսյան դպրոցի տպարանը հիմնադրվել է 1823 թվականին: Մակայն այս թվականը ճշգրտման կարիք ունի: Ա. Երիցյանը գրում է. «Քանի դեռ Ներսեսի ուսումնարանը չէր շինված, հիշյալ տպարանը զետեղվեց առաջնորդիս կառուցած կրպակներում, իսկ դրանից էլ առաջ՝ վանքի առաջնորդարանում:

⁷ Լեռ. նշվ. ժող., էջ 609:

⁸ Տե՛ս Ա. Երիցյանի ն. Պատմություն 75-ամեայ գոյութեան Ներսիսեան Հայոց հոգևոր դպրոցի որ ի Թիֆլիզ (1824–1899), հ. Ա (1824–1850), Թիֆլիս, 1898, էջ 121:

⁹ Գ. Լևոնյանի նշվ. աշխ., էջ 220:

¹⁰ Ա. Երիցյանի նշվ. աշխ., էջ 120:

Թեև 1819 թվականից տպարանը արդեն բաց էր համարվում, բայց հայտնի չէ մեզ, թե մինչև 1823 թվականը ինչ ու ինչեր են տպվել»¹¹:

Հարց է ծագում. տպարանի գոյության սկիզբը պետք է համարել նրա հիմնադրման առաջին տարվանից, թե՛ այնտեղ ծնված անդրանիկ գրքի լույսընծայման թվականից¹²: Անվիճելի փաստ է, որ Գեորգ Արծրունին տպարանը Թիֆլիս է բերել և Աշտարակեցուն նվիրել 1817 կամ 1818 թվականին: Մինչև 1819 թ. և դրանից հետո Ներսես Աշտարակեցին հարստացրել է այն: « Որովհետև, – ինչպես նշում է Ա. Երիցյանը, – Արծրունին տառերի և մյուս պարագաների հետ բերած էր միայն մի փոքրիկ փայտյա մամուլ, վասնորոյ Ներսեսը յուր միջոցներով ձեռք բերեց մի մեծ մամուլ և մյուս պակասորդ իրերը: Շուտով Արծրունույ օրինակին հետևեց քաղաքիս հայագն իշխան Աղամալ Խոջամինասեանցը՝ ընծայելով ռուսերէն տառերի պղնձեայ մայրերը: Ձեռք բերվեցան նմանապես վրացերէն, պարսկերէն և լատինական տառեր: Տպարանն ուներ բավականաչափ պողպատեայ զանազան զարդեր, ծաղկատառեր և պատկերներ»¹³: Այդ տպարանում սկզբնական շրջանում Ներսես Աշտարակեցին տպագրել է Վրաստանի հայոց թեմին վերաբերող վիճակագրական տեղեկություններ և եկեղեցական պաշտոնական փաստաթղթեր և այլն:

Այսպիսով, Ներսիսյան դպրոցի տպարանի հիմնադրման թվականը պետք է համարել 1819-ը և ոչ թե 1823-ը: Այդ տպարանում էլ 1823 թ. վերջերին լույս է տեսնում հայերեն առաջին գիրքը Թիֆլիսում: Այդ գիրքը, որ կոչվում էր «Պատմութիւն եւ խրատ բժշկութեան ցաւոյն նորոգ ծագելոյ յաշխարհին Հնդկաց և երեւելոյ ի զանազան աշխարհս, որ անուանեալ կոչի կալիքամարպս: Աւանդեալ ի համբաւաւոր բժշկէ աշակերտելոյ ի բժշկական ուսումնարանի Անգլիացոց ի Կալկաթա, ի պարոն Դաւթայ Մկրտչեան Կարբեցոյ», ոչ միայն Վրաստանում, այլև ամբողջ Ռուսաստանում առաջինն էր խոլերա (մաղձախտ) հիվանդության վերաբերյալ: Նրա հեղինակն էր Հնդկաստանից Թիֆլիս տեղափոխված բժիշկ Դավիթ Կարբեցի Մկրտչյանը, որը Աշտարակեցու խնդրանքով գրում է այդ բժշկարանը Հնդկաստանից դեպի Կովկաս և Եվրոպա տարածվող խոլերայի դեմ պայքարելու համար: Գրքի հեղինակը Հնդկաստանում զբաղվել էր այդ հիվանդության բուժման խնդիրներով: Հաջորդ տարում՝ 1824-ին, տպարանը տպագրում է Ներսես Աշտարակեցու աշխատություններից մեկը՝ «Համառոտութիւն անցից Քրրիստոսակերտ Մայր Աթոռոյ Հայոց սրբոյ Էջմիածնի, տպագրեալ յաղագս համազգային ծանօթութեանց», որը երկրորդ անգամ հրատարակվել է 1853 թ.՝ դարձյալ նույն տպարանում:

¹¹ Նույն տեղում, էջ 121:

¹² Նշենք, որ ինչպես Գ. Լևոնյանը («Հայ գիրքը և տպագրության արվեստը»), այնպես էլ Թեոդիկը («Տիպ ու տառ») և շատ այլ հեղինակներ տպարանների հիմնադրման սկիզբը որոշում են դրանցում տպագրված առաջին գրքերի լույսընծայման տարեթիվով: Մեզ թվում է՝ տպարանի հիմնադրման թվականը որոշելու նման սկզբունքը թյուրիմացությունների տեղիք է տալիս: Չէ՞ որ կարող է տպարանը ստեղծված լինել ավելի վաղ, քան այնտեղ կտպագրվեր առաջին գիրքը կամ թերթը: Ուստի, մեր կարծիքով, պետք է տպարանների հիմնադրման թվականները նշել առանձին, իսկ դրանցում լույս տեսած առաջին գրքերի տարեթիվերը՝ առանձին:

¹³ Ա. Երիցյան. նշվ. աշխ., էջ 120:

Ն. Աշտարակեցու նախաձեռնությամբ և առևտրական Գեորգ Արծրունու միջոցներով ստեղծված տպարանը, փաստորեն, Կովկասյան զինվորական կառավարչության տպարանից հետո երկրորդ խոշոր տպարանն էր Թիֆլիսում: Եվ ճիշտ է նկատում Լեոն, երբ գրում է, թե չնայած իր աղքատությանը, չնայած արվեստի խեղճ դրությանը, Ներսիսյան դպրոցի տպարանը մի նշանավոր երևույթ էր «Կովկասի մայրաքաղաքում»¹⁴: Սկզբնական շրջանում տպարանի աշխատանքները հսկում էր Գեորգ Արծրունին, որը նաև տպագրական գործի լավ գիտակ էր: Ներսես Աշտարակեցու և նրա ջանքերով տպարանը սկսում է ծավալել գրահրատարակչական լայն գործունեություն: Հետագայում այստեղ էին տպագրվում նաև «Կովկաս» (1846–1847 թթ.) և «Մեղու Հայաստանի» (1858–1862 թթ.) թերթերը: Սրանցից առաջինը եղել է գրաբար, իսկ երկրորդը՝ աշխարհաբար:

Ն. Աշտարակեցին ամեն ինչ անում է տպարանը հարստացնելու համար, ձեռք է բերում նոր մեքենաներ, ստեղծում է տառաձուլարան: Նա դեռևս 1825 թ., երբ դպրոցում դասատվության համար Փարիզից Թիֆլիս է հրավիրում ժամանակի համբավավոր գիտնական Հակոբ Շահան-Ջրպետյանին, իր հրավեր-նամակում նրան հանձնարարում էր դպրոցի տպարանի համար պատվիրել ֆրանսերեն տառատեսակներ, իմանալ գրաձուլության կապարի բաղադրությունը և տպագրական ներկի պատրաստման եղանակը: Հ. Շահան-Ջրպետյանը Ներսես արքեպիսկոպոսին ուղարկած իր մի պատասխան նամակում գրում է. «Վասն գաղղիացի տառից՝ մտածեցի, խորհրդակցեցայ ընդ արուեստագետ բարեկամս, և բացորոշեցաք ունիլ միայն զմայրս գրոց, վասն որոյ և յանձնեցաք քաջ փորագրողի միոյ Տիտո Լեժէ անուն (որ հոչակաւոր ոմն է յայս արհեստ ոչ միայն ի Փարիզ, այլև ի բոլոր Եւրոպիա) առ ի պատրաստել և ողորկել վասն մեր՝ ա) զմի շար մայրս բոլոր գրոց, բ) զմի շար մայրս նօտր գրոց, գ) զերեք շար մայրս գլխագիր տառից, դ) զերկու լաւ տիպար առ ի ձուլել զգիրսն, ե) զերեք գրաշար զանազան մեծութեամբ: Չայս ամենայն՝ գոր յանձնեալ եմ արդէն երկու ամիսք են, ընկալնլոց եմ ետ 15 կամ 20 աւուրց: Թիւ ամենայն մարցն լինին աւելի զ250: Չափ մեծութեան տառիցն, թէ գլխագրոց և թէ մանր գրոց, է իբր նոյն ընդ տառիցն Դիոնիսեայ քերականութեան իմոյ, այլ աւելի չքնաղ և արուեստաւոր, և սորօք կարեմք զամբողջ մատեանս տպագրել այդր գաղղիացի կամ այլ եւրոպական լեզուօք»¹⁵: Նամակագիրը խոստանում է տեղեկություն իմանալ նաև կապարի բաղադրության ու տպագրական ներկի պատրաստման վերաբերյալ, ինչպես և «ի վերայ հարց և մարց ռուսալեզու գրոց»: Սակայն «մինչև Հակոբ Շահան-Ջրպետյանը կկատարեր իր խոստումները,– գրում է Ա. Երիցյանը,– Ներսեսի կարգադրությամբ տպարանն արդեն կազմել էր իր ձուլարանը և ձուլում էր հայերեն ու ռուսերեն տառեր: Բացի ձուլարանից՝ տպարանն ունեցավ նաև իր վիճակագրությունը (լիսօգրաֆիա), վիճակագրական մամուլ երեք քարեայ և մի արձձեայ տախտակներով»: Այստեղ կային նաև վրացերեն հարուստ տառատեսակներ: Ա. Երիցյանը, մի այլ առիթով, խոսելով տպարանի գործունեության մասին, ավելացնում է. «Հարկ է ասել, որ հրատարակութեանց վերա-

¹⁴ Տե՛ս Լ, է. ն. նշվ. ժող., էջ 609:

¹⁵ Ա. Երիցյանի նշվ. աշխ., էջ 129:

դիտողը, ավագ գրաշարն ու երեսկապողն էր ունի Գեւորգ, որ ծառայեց տպարանին բացվելու օրից մինչև գոցվելը (1830 թ.) և հայտնի էր « տպագրապետ» անունով: Դա իրեն օգնական ուներ մի գրաշար՝ հավլաբարցի Հովակիմին: Ոչ պակաս ծառայած է նմանապես «տպիչ» Սարգիսն: Տպարանի վրա ծախս էր լինում ամսական՝ տպագրապետ Գեւորգին 12 ռ. 50 կ., գրաշար Հովակիմին 4 ռ., տպիչ Սարգիսին 8 ռ., մրագարկին 6 ռ. 50 կ., ի պետս մանր ծախուց 10 ռ., ընդամենը 41 ռուբլի, իսկ տարեկան՝ 492 ռուբլի:

Տպարանիս համար մեծ դժվարությունը թուղթն էր, որ գալիս էր Ռուսաստանից, ու երբեմն ստիպված էին լինում բերել տալ փոստայով, շատ ծանր վճարով: Թուղթ չճարվելու պատճառով շատ անգամ տպագրությունը դադարում էր կամ հետաձգվում ամիսներով¹⁶:

Շուտով Ներսիսյան դպրոցի տեսուչ է նշանակվում Մոսկվայից Թիֆլիս տեղափոխված Հարություն Ալամդարյանը: Նա ստանձնում է նաև տպարանի տնօրինությունը և կարճ ժամանակում այնտեղ կարգ ու կանոն է հաստատում ու տպագրության հանձնում կրոնական և քերականական դասագրքեր: Ալամդարյանի օրոք տպարանը հրատարակում է մի քանի դասագրքեր և ընթերցանության ձեռնարկներ: Տպարանի գործունեության առաջին շրջանում, մինչև 1830 թ., տպագրվում է 12 անուն գիրք՝ մոտ 5.000 օրինակ տպաքանակով: Այստեղ հրատարակված գրքերի տպաքանակը եղել է հետևյալը. դասագրքերի համար՝ մինչև 2.000 օրինակ, օրացույցների համար՝ 1.200 օրինակ, իսկ մնացած հրատարակությունների համար՝ 25–700 օրինակ:

Իր գոյության առաջին տասնամյակում այս տպարանը լույս է ընծայել մի շարք արժեքավոր աշխատություններ ու դասագրքեր, որոնցից են. Եփրեմ Խուրի Ասորու «Ասորույ գիրք աղօթից», Հ. Ալամդարյանի թարգմանությամբ «Հրահանգ քրիստոնեական վարդապետության ի պետս մանկանց Հայաստանեայց ս. եկեղեցույ», Հովհ. Մերաստացու «Ներբողական նուագերգությունք», Ն. Աշտարակեցու «Հայելի պարտաւորութեանց ծիսատէր քահանայից» և այլն, որոնք տպագրվել են 1825-ին, իսկ 1826-ին լույս է ընծայվել Մ. Չամչյանի «Քերականութիւն Հայկազեան լեզուի» դասագիրքը, որը նույն տարում ունեցել է նաև երկրորդ հրատարակությունը: 1827-ին տպագրվել է Ն. Աշտարակեցու «Հռչակ ողորմութեան կայսեր Ռուսաց» աշխատանքը, Ներսես Շնորհալու «Ողբ Եդեսիոյ» պոեմը, գեներալ-ադյուտանտ (համհարզ) Ն. Մ. Միսյազիհի «Թուղթ յայտարարութեան նոր կուսակալին Պասկեիչի, Պարսից պատերազմի մասին» և «Առաջադրութիւն Հայոց նոր սարքվող գործի համար» գրքերը: Վերջինս կրկին վերահրատարակվել է մեկ տարի անց՝ 1828-ին և կրել է «Առաջադրութիւն Հայոց նոր սարքվող գործի մասին» վերտառությունը: 1829-ին էլ լույս է տեսել Գ. Արծրունու «Դարաստան խրատուց» մանկական ժողովածուն, որը վերահրատարակվել է նաև 1830-ին:

Ներսիսյան դպրոցի տպարանի գործունեության կարճատև դադարեցումից հետո Թիֆլիսում 1833 թ. ռուսերեն, առանց տպարանի հիշատակման,

¹⁶ Նույն տեղում, էջ 128:

տպագրվել է մի վայելչագրական այբում, որը կրում է «Прописи армянские: В пользу Тифлисского Армянского и прочих Закавказских училищ»¹⁷ վերնագիրը: Մեզ թվում է, այս գիրքը, որը վերահրատարակվել է նաև 1840-ին¹⁸, տպագրվել է Կովկասի ռուսաց զինվորական կառավարչության տպարանում, որն այն ժամանակ Թիֆլիսում գործող միակ բազմալեզու տպարանն է եղել:

Դպրոցի հիմնադրումից անմիջապես հետո Ն. Աշտարակեցին մտադիր էր Մխիթարյան միաբանության օրինակով Թիֆլիսի իր տպարանում հրատարակել եռամսյա մի պարբերական, որը կրելու էր «Տարեգրություն Հայոց գրագիտական» վերնագիրը: Այն ունենալու էր գուտ գիտական բովանդակություն և հրատարակչությունն սկսվելու էր 1826 թ. աշնանը կամ 1827 թ. սկզբներին: Արդեն պատրաստվում ու հավաքվում էին նյութերը, սակայն 1827 թ. սկսվում է ռուս-պարսկական պատերազմը և խափանվում է Աշտարակեցու նվիրական այդ ձեռնարկումը: Հանդեսի համար հավաքված նյութերը նույն՝ 1827 թ. հրատարակվում են «Երախայրիք Ներսիսեան դպրոցի» վերտառությամբ, Ա և Բ հատորներով: Դրանք դպրոցի ուսուցիչների և սաների արձակ թարգմանություններն ու ինքնուրույն չափածո ստեղծագործություններն էին:

Այս բոլոր հրատարակությունների անվանաթերթերի վրա տպագրված են. «Բ նորաբողբոջ տպարանի նորակերտ ուսումնարանի Հայոց, ընծայելոյ ի քաջատոհմիկ ազնիւ Գեորգայ Երեմեան Արծրունւոյ», «Հոգեւոր դպրոցի Հայոց ընծայելոյ յարժանայիշատակ ազնուական Գեորգեայ Արծրունւոյ»: Չնայած Ներսես Աշտարակեցին քիչ ջանք չէր թափել տպարանը հիմնադրելու և հարստացնելու համար, այնուհանդերձ նա Գեորգ Արծրունու անունը հիշատակում էր տպագրվող ամեն մի գրքի վրա՝ նրա դերն ընդգծելու նպատակով:

Մակայն, ցավոք, Ներսիսյան դպրոցի և նրա տպարանի հաջողություններն առաջին շրջանում կարճ են տևում. 1830 թ. փակվում են և՛ դպրոցը, և՛ տպարանը: Հ. Ալամդարյանն առանձնանում է Հաղբատի վանքում: Ն. Աշտարակեցին 1828 թ. արդեն զեներալ Պասկևիչի լարած մեքենայությունների հետևանքով գտնվում էր արքայապարտ՝ Քիչնևում: Իսկ Գեորգ Արծրունին նույն թվականին մահացել էր խոլերայից: Այդպիսով, դպրոցը և տպարանը մնացել էին գոց ու անտեր:

Մի կարճ ժամանակ անց, Հովհաննես Կարբեցու կաթողիկոսության օրոք, Ներսիսյան դպրոցը վերաբացվում է «Ուսումնարան Հայոց» անունով, իսկ տպարանն այդպես էլ մնում է փակ մեկ տասնամյակից ավելի և վերաբացվում է միայն 1841 թ.՝ Կարապետ արքեպիսկոպոս Բագրատունու ջանքերով: «Բանալով տասնմեկ տարի գոց մնացած տպարանի դռները, – գրում է Ա. Երիցյանը, – գտան խառնիխուռն և փոշիի մեջ անձաձ երեք փայտյա տպագրական մամուլ, երկու մեքենա վիմագրութեան, քանի մի հատ լիտոգրաֆիի քարեր, քանի մի հատ գործիքներ գրաշարութեան և տառ թափելու, հայոց, ռուսաց և վրաց թափեալ թերակատար տառեր, ռու-

¹⁷ Տե՛ս Հ. Դ ա վ թ յ ա ն. Հայ գիրքը 1801–1850 թվականներին: Մատենագիտություն, խմբագրությամբ Հ. Ս. Անասյանի, Երևան, 1967, էջ 199:

¹⁸ Նույն տեղում, էջ 259:

սաց և գաղղիացոց մայր տառեր և քանի մի կազմարարական գործիքներ և այլն: Հրամանով Կարապետ արքեպիսկոպոսի՝ 1841 թվին ձեռք բերվեցան մնացած կարևոր պարագայք, ի թիվս որոց հայոց, ռուսաց և պարսից ու արաբացոց տառեր»¹⁹:

Կարճ ժամկետում տպարանը դուրս է բերվում ծանր վիճակից, և ամեն ինչ նորից ընկնում է հունի մեջ: Եվ 1842–1843 թթ. ընթացքում հնարավորություն է ստեղծվում տպագրելու 6 անուն գիրք: Դրանց մեջ ամենածավալունն ու արժեքավորը Սարգիս եպիսկոպոս Ջալալյանի «Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան» աշխատության Ա հատորն է, որը լույս է տեսնում 1842 թ., Բ հատորը ևս տպագրվել է նույն տպարանում, 1858-ին: Այդ տարում տպագրվում են նաև «Ավետարանը», Հովսեփ քահանա Օրբելու «Այբբենարանը», իսկ հետագայում՝ Ռոստոմ Երզնկյանի «Համառոտութիւն պատմութեան Հայոց» (1843 թ.), «Սաղմոս Դավթի» (1844 թ.), Ն. Աշտարակեցու «Այցելութիւն սգաւորաց» (1847 թ.) և այլ գրքեր:

Տպարանն աստիճանաբար հարստանում է, ձուլվում են նոր տառատեսակներ, ձեռք են բերվում տպագրական մեքենաներ: Տպարանի վրա նորից իր խնամքն ու հոգատարությունն է տարածում Ներսես Աշտարակեցին, որը 1843 թ. արդեն Ամենայն Հայոց կաթողիկոսն էր: Այդ տպարանում արդեն հնարավորություններ են ստեղծվում թերթերի ու ամսագրերի տպագրության համար: Այնտեղ մինչև 1850-ական թվականների վերջը տպագրված գրքերի մեջ իրենց արժեքով ու պոլիգրաֆիական կատարումով աչքի են ընկնում «Ինկվիզիցիայի պատմութիւն»-ը (1853 թ.), Գաբրիել Երեցվոյանցի «Ռուսերէն-հայերէն բառարանը» (1854 թ.), «Բաղդատութիւն պատմութեան Մովսէս Խորենացու»-ն (1858 թ.), Մատթէոս կաթողիկոսի «Բարի մարդ և բարի քրիստոնէայ» (1860 թ.) աշխատությունը կրկնակի հրատարակությամբ և այլ գրքեր: Առաջին անգամ 1858 թ. այս տպարանում է տպագրվել նաև Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» անգուգական վեպը:

Ահա այսպիսի արգասավոր ուղի է անցել Ներսիսյան դպրոցի տպարանը, որը շուրջ չորս տասնամյակ, ընդհուպ մինչև 1860-ական թվականների կեսերը, առաջատար գրատպության օջախն էր կովկասահայության մեջ և, չնայած իր աղքատ տպագրական բազային, պարբերաբար լույս աշխարհ էր հանում ինչպես դասագրքեր ու գեղարվեստական գրականություն, այնպես էլ պարբերական մամուլ: Ընդհանուր հաշվարկով, նրա տպագրած գրքերի թիվը հասնում է 33 անունի: Եվ չնայած տպագրության որակով համեմատաբար թույլ են նրա արտադրած գրքերը, բայց և այնպես նրա հիմնադրությունն ու գոյությունը մշակութային մի խոշոր երևույթ էր Անդրկովկասի հայության կյանքում: Այն մեծ խթան հանդիսացավ Կովկասում հայ գրքի և տպագրական արվեստի զարգացման գործում:

Թիֆլիսի հայկական տպագրության սկզբնավորման ու զարգացման գործին որոշակիորեն նպաստել է Հակոբ և Դավիթ Արզանյանց եղբայրների տպարանը: Մրա արժեքը մեծ է նրանով, որ գործել է Ներսիսյան դպրոցի տպարանի 10-ամյա ընդհատման շրջանում՝ 1838–1843 թվականներին:

¹⁹ Ա. Եր ի ց ե ա ն. նշվ. աշխ., էջ 433:

Արզանյանց եղբայրների տպարանը, փաստորեն, այն ժամանակ Թիֆլիսում գործող միակ հայկական տպարանն է եղել: Նրա հիմնադիրները նոր տեսակի տպագրական տառեր են ձևավորել և տպարանը հարստացնում նաև ռուսական, վրացական, լատինական ու արաբական տառատեսակներով: Այս տպարանն իր գոյության ընթացքում հրատարակել է տասից ավելի գրքեր: Առաջին անգամ այստեղ է տպագրվել Խ. Աբովյանի «Նախաշավիղ կրթության ի պէտս նորավարժից» նշանավոր ձեռնարկը (1838 թ.): Այստեղ են տպագրվել նաև «Դարաստան հատընտիր գրուածոց հայ մատենագրաց», «Այբբենարան հայոց ի պէտս նորուսումն մանկանց» (1838 թ.), Արզանյանց եղբայրների հեղինակած «Համառօտ քերականութիւն Հայոց» (1840 թ.) դասագրքերը, «Բժշկական տեղեկատուն» (1843 թ.), ինչպես և՛ «Առակներ և պատմութիւններ նախնական ընթերցանութեան համար» (1839 թ.) ռուսերեն ժողովածուն, որն իր տեսակի մեջ առաջինն էր, և ժամանակի խոսակցական աշխարհաբարով գրված «Կանօներ դրուզինո-իմերետսկի գուբերնիայի» (1842 թ.) և Ե. Տեր-Ղուկասյանի «Կանօնք գործածականք» (1843 թ.) գրքույկները: Այս տպարանի հիման վրա հետագայում Կովկասի փոխարքան ստեղծել է տպագրական գլխավոր վարչությունը, որի պատճառով այն վերակառուցվել ու ծառայել է այլ նպատակների:

Մյուս տպարանը, որ Թիֆլիսում կազմակերպվել է մի փոքր ավելի ուշ, պատկանել է Ղուլյանց և Շահմուրադյանց գործընկերների: Այստեղ 1849 թ. տպագրվել է «Կրթութիւն ավետարանական ի պէտս հայ դպրոցաց», իսկ 1850-ին՝ Ալեքսանդր Արարատյանի «Ճակատ անմահից, զեղերական արկածից Յակոբ արդարոյն հանգերգութեամբ չափաւորեալ ի համբերութեան և ի խրատ» գրքերը:

XIX դարի կեսերին հայ տպագրական գործը Թիֆլիսում աննախընթաց վերելք է ապրում: 1850 թ. Նոր Նախիջևանից Թիֆլիս է տեղափոխվում Գաբրիել քահանա Պատկանյանը, որը սկսում է հրատարակել իր հիմնադրած «Արարատ» շաբաթաթերթը (լույս է տեսել մինչև 1851 թ. ապրիլ ամիսը): Այդ թերթի յուրաքանչյուր համարի վերջին էջում միշտ տպագրվում էր «Ի Տպարանի տեսածն Գաբրիել Պատկանեան» ծանուցումները: Իսկ 1850 թ. դեկտեմբերի 9-ից դրան ավելացված է. «Տպարանս նորոգեցաւ օգնութեամբ գերապատիւ եւ ազգասէր իշխանի Նախիջեւանայ նահանգական ուսումնարանի պատուանուն վերատեսչի ադա Աւետիքի Գալստեան Տեր-Գրիգորեանց»: Լրագրի 1851 թ. փետրվարի 3-ի համարում «Տպագրութիւն ի Հայս» վերտառությամբ հոդվածից երևում է, որ Գ. Պատկանյանի վաղեմի երազանքն է եղել ունենալ իր սեփական տպարանը: Այդ նպատակով էլ նա Նոր Նախիջևանում ու Աստրախանում «ազգասէր և ուսումնասէր» անձանցից գումարներ է վերցրել և 1831 թ. Քիչննում ու Օդեսայում իր ունեցած պողպատյա հայր տառերը շնորհալի արվեստագետների ու պոլիգրաֆիստների միջոցով ուղղել է սովել և դրանց կադապարներով ձուլել է սովել նոր տառատեսակներ, որոնցով էլ Թիֆլիսում սկսում է տպագրել «Արարատ» շաբաթաթերթը: Սակայն նրա այդ տառատեսակները գրեթե ոչնչով չեն տարբերվում Ներսիսյան դպրոցի տպարանի տառատեսակներից և «Արարատն» էլ ոչ մի բանով չի զանազանվում հիշյալ տպարանի լույս ընծայած գրքերից. բոլորն էլ գրեթե նույն որակն ու տեսքն ունեն:

Մակայն, ինչպես նշում է Գ. Լևոնյանը, որքա՞ն է տնել Տեր-Գաբրիելի տպարանը կամ այնտեղ, բացի «Արարատից», ուրիշ գործեր տպագրվել է են, թե՞ ոչ, մեզ հայտնի չէ²⁰: Միայն հայտնի է, որ 1850-ին այս տպարանից է դուրս եկել «Համառոտ հրահանգ քրիստոնեական հաւատոյ» 16 էջանոց գրքույկը:

1850-ական թվականների վերջերին Թիֆլիսում հիմնադրվում է մի տպարան նա: Դա Գաբրիել Մելքումյանցի և Համբարձում Էնֆիաճյանցի տպարանն էր, որը շուտով ձեռք է բերում մեծ համբավ: Մինչ այդ տպարանի հիմնադրումը, 1840-ական թվականների վերջերին Ավետիք և Համբարձում Էնֆիաճյանց եղբայրները Թիֆլիսի կենտրոնում, Երևանյան հրապարակում գտնվող մի շենքի վերնահարկում, որը հետագայում Թամամշյանների թատրոնի և քարվանսարայի հիմքն է դառնում, կազմակերպում են գրավաճառանոց, որն այն ժամանակ Թիֆլիսում եղել է միակը, որտեղ վաճառվել են աշխարհի տարբեր քաղաքներում լույս տեսած հայերեն գրքեր ու պարբերականներ: Դրանից տասը տարի անց, 1850-ական թվականների վերջին, Համբարձումը Գաբրիել Մելքումյանցի ընկերակցությամբ նույն շենքում բացում է վերոհիշյալ տպարանը: Վերջինս շուտով թողնում է այն ու հեռանում, որից հետո տպարանը պատկանում է միայն Հ. Էնֆիաճյանցին: Նա և՛ տպարանատերն էր, և՛ հրատարակիչը:

Առաջին շրջանում այդ տպարանում սկսում է տպագրվել Մ. Աղաբեկյանի «Կռունկ Հայոց աշխարհին» ամսագիրը (1860–1863 թթ.), որի տիտղոսաթերթին նշվում էր. «Ի հայ տպարանի Գաբրիելի Մելքումեանց և Համբարձումայ Էնֆիաճեանց»: 1862-ից այս տպարանը Ներսիսյան դպրոցի տպարանից կարողանում է իր հարկի տակ տանել նաև «Մեղու Հայաստանի» լրագրի հրատարակությունը: Այստեղ են լույս տեսել նաև Գաբրիել Խատիսյանի «Մեր» մանկական ընթերցանության գիրքը (1861 թ.), Մատթեոս կաթողիկոսի «Հայելի աստուածային շնորհաց» աշխատությունը (1862 թ.), Խ. Աբովյանի «Պարապ վախտի խաղալիք» ժողովածուն (1864 թ.), Գ. Սունդուկյանի «Գիշերվա սաբրը խեղ է» (1866 թ.) և այլն: Հետագայում Ներսիսյան դպրոցն էլ իր գրքերը տպագրել է տալիս այս տպարանում: Օրինակ, Ստ. Պալասանյանի 1865 թ. լույս ընծայած «Պատմութիւն Հայոց գրականութեան» արժեքավոր գրքի վրա գրված է. «Տպագրութիւն Ներսիսեան ազգային հոգեւոր դպրոցի ի տպարանի Հ. Էնֆիաճեանց և Ընկերութեան»: 1860-ական թվականների կեսերից մինչև 1870-ական թվականների վերջերը այս տպարանից են լույս տեսնում բազմաթիվ արժեքավոր գրքեր ու պարբերականներ: Այստեղ են տպագրվում «Հայկական աշխարհ» (1864–1871 թթ.), «Վաճառական» (1866–1867 թթ.), «Փորձ» (1876–1881 թթ.), «Գարուն» (1886 թ.) պարբերականները, ինչպես նաև «Համառոտ մանկաւարժութիւն» (1875 թ.) արժեքավոր գիրքը:

Հ. Էնֆիաճյանցի տպարանի առավելությունն այն էր, որ ուներ ձուլարան: Եվ այդ տպարանը, ինչպես նշում է Լեոն, նշանավոր ծառայություն մատուցեց ռուսահայոց տպագրական գործին նրանով, որ գործածության մեջ մտցրեց Փարիզի նորաձև հայերեն տառերից շատերը, իսկ Վիեննայի

²⁰ Գ. Լևոնյան. նշվ. աշխ., էջ 226:

տառերից մի տեսակը, որը գործ էր անվում գրքերի համար, բարեփոխեց՝ հեռացնելով դրանց տգեղ հին գլխագրերը և որոնց հետ հարմարեցրեց փարիզյան գլխագրերը: Ստացվեց մի ինքնուրույն տպարանական գործ, որը կարելի է անվանել Թիֆլիսի տիպ: Աչքի ընկնող մաքուր տպագրություն, անցյալի համեմատությամբ մեծ ճաշակավորություն – այս հատկություններով էր, որ Էնֆիաճյանցի տպարանը շուտով բոլորովին խլացրեց Ներսիսյան դպրոցի տպարանը և իր ձեռքն առավ համարյա բոլոր հայերեն տպագրությունները: Այս տիրապետող դիրքը նա պահեց իր ձեռքում համարյա մինչև 1880-ական թվականները: Թեև մինչ այդ էլ նոր տպարաններ բացվեցին ու մրցակից հանդիսացան, բայց Էնֆիաճյանցի ուժն իր ձուլարանն էր, որ տառեր էր մատակարարում և մյուս տպարաններին²¹:

1880-ական թվականների սկզբին Հ. Էնֆիաճյանցի տպարանն անցնում է Մ. Ռոտինյանցին, որը, ձուլարանը խափանելով, տպագրական գործը հաջողությամբ շարունակում է մինչև XIX դարի վերջը՝ տպագրելով շուրջ 200 անուն գիրք, հետագայում ժառանգություն թողնելով որդուն՝ Տ. Ռոտինյանցին: 1888 թ. այստեղ սկսում է տպագրվել Ա. Արասխանյանի «Մուրճ» ամսագիրը, ինչպես նաև «Քուչակ Նահապետի երգերը», «Գիրք թղթոցը» և այլ գրքեր:

XIX դարի 60–70-ական թվականներին Թիֆլիսը, որպես հայ գրատպության կենտրոն, առաջատար դիրք էր նվաճել ոչ միայն Անդրկովկասի, այլև ամբողջ Ռուսաստանի նկատմամբ: Այդ շրջանում Թիֆլիսում արդեն լույս էին տեսնում մեծ քանակությամբ հայերեն գրքեր: Ըստ վիճակագրական տվյալների՝ 1860-ական թվականների հայերեն գրքի հրատարակությունը քաղաքում գրավում է երկրորդ տեղը: Այսպես, 1862–1868 թթ. այստեղ տպագրվել են ռուսերեն 91, հայերեն 53, վրացերեն 42, կաբարդիներեն 4, օսերեն 2 անուն գրքեր²²: Իսկ դրանցից երկու տասնամյակ անց՝ 1890-ական թվականներին Թիֆլիսն արդեն հայ գրքի հրատարակությամբ գրավում է առաջին տեղը Կովկասում: Օրինակ, միայն 1891 թ. այստեղ հրատարակվել են հայերեն 131, ռուսերեն 114, վրացերեն 79, թուրքերեն 7 անուն գրքեր²³: Ահա այս շրջանում է, որ Թիֆլիսում հիմնադրվում է Հովհաննես Մարտիրոսյանցի տպարանը, որն իր երկարատև կյանքով և տպագրված արտադրանքով ու որակով առաջնակարգ տեղ է գրավում: Այստեղ են տպագրվում գիտական աշխատություններ, դասագրքեր, ժամանակի գեղարվեստական գրականության մեծ մասը, մի շարք առաջատար պարբերականներ, որոնցից են՝ «Մշակ» (1872–1921 թթ.), «Մանկավարժական թերթ» (1878–1879 թթ.), «Արձագանք» (1882–1898 թթ.), «Աղբյուր» (1883–1918 թթ.), «Հորիզոն» (1894 թ.) և այլն: Այս տպարանից է լույս տեսել նաև Ազաթանգեղոսի «Պատմութիւն Հայոց»-ը (1882 թ.):

1890-ական թվականներին Հովհ. Մարտիրոսյանցի տպարանն անցնում է նրա որդուն՝ Կոստանդին Մարտիրոսյանցին, որն իր հոր գործը շարունակում է մինչև 1910-ական թվականները: Այս տպարանից ավելի մեծ համբավ է ձեռք բերում Հովհ. Մարտիրոսյանցի մյուս որդու՝ Մնացական

²¹ Լ. և Ն. նշվ. ժող., էջ 609–610:

²² Տե՛ս Սборник статистических сведений о Кавказе. Тифлис, 1869, с. 165.

²³ Տե՛ս «Кавказский календарь» (Тифлис), 1892, с. 239–254.

Մարտիրոսյանցի առանձին տպարանը, որը, հիմնադրվելով 1896 թ., իր գոյությունը պահպանել է մինչև XX դարի 20-ական թվականները: Գ. Լևոնյանը նշում է, որ այդպիսի մի ճոխ և բարեկարգ տպարան Թիֆլիսը տեսնում էր առաջին անգամ: Արտասահմանյան ընտիր մեքենաներ, հայերեն և օտարալեզու տատերի բազմազանություն, որակյալ բանվորներ, տպարանատիրոջ մասնագիտությունը և ճաշակը, – այս բոլորի շնորհիվ Մ. Մարտիրոսյանցի տպարանից դուրս եկած գործերը ոչնչով ետ չէին մնում մոսկովյան հրատարակություններից²⁴: Նրա տպարանում են լույս աշխարհ եկել «Թատրոն» (1893–1905 թթ.), «Ազգագրական հանդես» (1896–1916 թթ.), որի անդրանիկ համարը տպագրվել է Շուշիում, «Գեղարվեստ» (1908–1921 թթ.) հանդեսները: Այս տպարանը հայտնի է նաև Ղազար Փարպեցու «Հայոց պատմություն» մատյանի հրատարակությամբ (1898 թ.):

XIX դարավերջին և XX դարասկզբին Թիֆլիսում հիմնվում են մի շարք նոր տպարաններ: Դրանց մեջ ամենանշանավորներից է 1881 թ. հիմնադրված Մովսես Վարդանյանցի տպարանը, որը, հետագայում անցնելով նրա որդուն՝ Վահագն Վարդանյանցին, գործում է մինչև անցյալ դարի առաջին տասնամյակի վերջը: Այս տպարանում տպագրվել են «Դիւցազունը ըստ Խորենացու», «Ուղեցոյց հայ ուսուցչի», «Ինքնուսուցիչ ռուսերէն լեզվի» գրքերը, որոնց հետ նաև «Վարժարան» (1882–1884 թթ.) և «Գործ» (1908 թ.) ամսագրերը:

Թիֆլիսում 1891 թ. Տիգրան Նազարյանցը ևս հիմնադրում է մի տպարան, որը կրում է «Արոր» անունը: Այս տպարանը ևս գործում է մինչև 1910-ական թվականների կեսերը և լույս է ընծայում Եղիշեի «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին» երկը՝ աշխարհաբար (1891 թ.), Ղ. Աղայանի «Անահիտ» հեքիաթը և բազմաթիվ այլ գրքեր ու պարբերականներ: Սակայն Տ. Նազարյանցի այս տպարանը, հայ և համաշխարհային դասական գրողների երկերը տպագրելուց զատ, լույս աշխարհ է հանում գիտահանրամատչելի գրքույկներ, գեղանկարների ալբոմներ, արվեստի ու գեղագրության ձեռնարկներ և կերպարվեստի աշխատանքների վերատպություններ, որոնցով էլ նրա համբավը տարածվում է ողջ Կովկասում:

* * *

XIX դարավերջերին և XX դարասկզբին «կոմունիզմի ուրվականը» Եվրոպայից հասնում է Անդրկովկաս և իր խոր արմատներն է ձգում տեղի հասարակական-քաղաքական կյանքում: Հայ իրականության մեջ մինչ այդ գործող կուսակցությունների ու կազմակերպությունների կողքին ստեղծում են մարքսիստական առաջին խմբակները, որոնք հիմք են հանդիսանում հետագայում անդրկովկասյան կոմունիստական կուսակցությունների ստեղծման համար: Այդ խմբակների անդամների ուժերով մեծ քանակությամբ մարքսիստական գրականություն է տարածվում երկրամասում: Բացի այդ, հիշյալ խմբակների ղեկավարներ Ստ. Շահումյանի, Ս. Սպանդարյանի, Բ. Կնունյանցի, Ալ. Մյասնիկյանի և այլոց ուժերով թարգ-

²⁴ Գ. Լևոնյանն. նշվ. աշխ., էջ 227:

մանվում են Կ. Մարքսի, Ֆ. Էնգելսի, Գ. Պլեխանովի, Վ. Լենինի աշխատություններն ու տարածվում բանվորական շրջաններում, գրվում են ինքնուրույն բազմաթիվ արժեքավոր աշխատություններ և տպագրվում մամուլում ու առանձին գրքույկներով, հիմք է դրվում նոր տիպի բազմալեզու մամուլի: Այդ գործում անուրանալի դեր են կատարել Անդրկովկասի բանվորական խոշոր կենտրոններում գործած անլեզալ (գաղտնի) տպարանները, որոնց շարքում առանձնանում է Թիֆլիսի ընդհատակյա տպարանը:

ՌՄԴԲԿ Կովկասյան Միությանական կոմիտեի կողմից 1903 թ. աշնանը առաջավոր բանվոր Միսո Բոճորիձեին հանձնարարվում է Թիֆլիսում կազմակերպել անլեզալ (գաղտնի) տպարան, որի նախաձեռնությամբ ու ղեկավարությամբ Հավլաբար թաղամասի մի խուլ անկյունում կառուցվում է բնակելի տուն, որի ստորին նկուղում, «մոտ 5 արշին բարձրությամբ, 12 արշին երկարությամբ և 6 արշին լայնությամբ» տարածքում կազմակերպվում է ընդհատակյա տպարան: Լեզենդար Կամոյի (Միսոն Տեր-Պետրոսյան) անմիջական օգնությամբ ու աջակցությամբ ձեռք են բերվում տպագրական մեքենաներ ու սարքավորումներ, ավելի քան 80 փութ ռուսական, հայկական ու վրացական տառեր և այլ պարագաներ ու կահավորում այդ տպարանը²⁵:

ՌՄԴԲԿ III համագումարին տրված Կովկասյան կոմիտեի հաշվետու զեկուցման մեջ նշվում է, որ 1903 թ. նոյեմբերից 1904 թ. մայիսը կոմիտեն հրատարակել է «Պրոլետարիատի կոմի» թերթիկ»-ի 3-8-րդ համարները՝ ռուսերեն, վրացերեն և հայերեն լեզուներով²⁶: Յուրաքանչյուր համար լույս է տեսել 6000 օրինակ տպաքանակով, այդ նույն ժամանակահատվածում տպագրվել է 6000 օրինակ բրոշյուր և 149 հազար օրինակ թռուցիկ: Դրանց զգալի մասը տպագրվել է Հավլաբարի ընդհատակյա տպարանում: Երկար ընդմիջումից հետո 1904 թ. սեպտեմբերին լույս է տեսել «Պրոլետարիատի կոմի» թերթի -7-ը՝ վրացերեն 2000, հայերեն՝ 1000 օրինակ տպաքանակով: Միայն 1904 թ. նոյեմբերի 20-ից դեկտեմբերի 16-ը Հավլաբարի տպարանում տպագրվել է շուրջ 30 հազար օրինակ թերթ, թռուցիկ, հայտարարություն և բրոշյուր: Այս տպարանում առանձին բրոշյուրով տպագրվել է Վ. Լենինի «Գյուղական չքավորությունը» 3000 օրինակ, «Պրոլետարիատի և գյուղացիության դեմոկրատական դիկտատուրան» ռուսերեն՝ 1000, իսկ վրացերեն և հայերեն լեզուներով՝ 3000 օրինակ:

1905 թ. հունվարի 8-ից նոյեմբերի 20-ը Հավլաբարի ընդհատակյա տպարանում ոչ լրիվ տվյալներով լույս է տեսել 275.215, իսկ 1906 թ. փետրվարին՝ 65.000 օրինակ հեղափոխական գրականություն²⁷: Այդ տպարանը գործել է 1903 թ. վերջերից 1906 թ. ապրիլի 15-ը, իսկ ապրիլի 16-ին այն արդեն բացահայտվել և գույքը բռնագրավվել էր, ողջ տպագիր գրա-

²⁵ Խ. Բարսեղյան. Բոլշևիկյան հայ պարբերական մամուլի պատմություն (1900–1920 թթ.), Երևան, 1956, էջ 103–104:

²⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 104–105:

²⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 105:

կանությունն էլ այրվել ու շենքը պայթեցվել²⁸: Գուցե դա է պատճառը, որ այդ տպարանի արտադրանքից ոչ մի օրինակ չի պահպանվել և նշված չէ «Հայ գիրքը 1901–1920 թվականներին» (Երևան, 2007, 820 էջ) մատենագիտության մեջ, ուր Թիֆլիսի հայկական տպարանների ընդհանուր ցուցակում նրա անունը նույնպես բացակայում է:

Թիֆլիսի ընդհատակյա մյուս տպարանը հիմնադրվել է Հայ հեղափոխական դաշնակցության կողմից, 1891-ին, ցարական ժանդարմական հսկողության ծանր պայմաններում: Սկզբում այն տեղավորվել էր «Նադ Կուրոյ» պանդոկի շրջակայքում, մի տան նկուղային հարկում: Ապահովության համար շուտով այն տեղափոխվել է Մթածմինդա լեռան լանջին գտնվող «Օրիորդ Ժենյայենց» տան ներքնահարկը: Տպագրատատերն ու սարքավորումները ժառանգություն էին մնացել մոսկովյան «Ազատության ավետարեք» թերթից: Այդ գաղտնի տպարանում էլ 1891 թ. գարնանը լույս են տեսնում «Դրոշակի թռուցիկ» թերթոնի երկու համարները, որոնցից առաջինը ցարդ չի հայտնաբերվել, իսկ երկրորդը՝ ազդարարում էր, որ ՀՀԴ-ն շուտով կունենա իր կենտրոնական օրգանը՝ «Դրոշակ» վերնագրով: Այդ տպարանում տպագրվել է «Դրոշակի» ընդամենը 2 համար, որից հետո տպարանը ցարական պահնորդության կողմից հայտնաբերվել, ունեցվածքը բռնագրավվել ու փակվել է: Դրանով ավարտվել է ՀՀԴ թիֆլիսյան գաղտնի տպարանի գործունեությունը: Չնայած թերթերի այդ համարները տպագրվել էին Թիֆլիսում, սակայն տպարանի գաղտնիությունը ապահովելու նպատակով դրանց վրա լույսընծայման վայր է նշված Վիեննան²⁹:

* * *

1905–1907 թթ. Ռուսական առաջին հեղափոխությունը բարենպաստ պայմաններ է ստեղծում նաև մամուլի ու տպագրական գործի զարգացման համար: Ինչպես ամենուր, այնպես էլ Թիֆլիսում ստեղծվում են բազմաթիվ տպարաններ, որոնցից աչքի են ընկնում «Հերմես» (Ս. Պ. Եղիզար-յանի), «Չանգակ», «Հառաջ», «Էսպերանտո» (Հ. Տեր-Աստվածատրյանի), «Գուտենբերգ», «Հրատապ» (Տ. Նազարյանցի), «Պրոգրես» (Լ. Պողոսյանի), «Մամուլ», «Արփի», «Մասիս», «Էկոնոմիկա» (Ս. Հակոբյանի), «Աշխատանք», «Աշխատավոր» և այլ մասնավոր գրատպության օջախներ: Այս նորերի կողքին իրենց գոյությունն էին պահպանում նաև հներից շատերը, որոնք այդ շրջանում ծավալում էին տպագրական լայն գործունեություն: Դրանք հրատարակում են հայերեն և այլ լեզուներով բազմաթիվ գրքեր ու պարբերականներ: Հայերեն և ռուսերեն գրքերի իր բարձրորակ տպագրությամբ Թիֆլիսում տարիներ շարունակ աչքի է ընկել նաև Մ. Տեր-Իսրայելյանի տպարանը: Նշենք նաև, որ Թիֆլիսում տարբեր ժամանակներում գործել են Ա. Թառույանի, Ա. Մելիք-Շահինա-

²⁸ 1937 թ. իր նախկին տեսքով Հավլարարի ընդհատակյա տպարանի շենքը վերականգնվել է, որտեղ կազմակերպվել է գրքերի ու փաստաթղթերի ցուցահանդես: Այն որպես հուշահամալիր-թանգարան գործել է մինչև Խորհրդային Միության փլուզումը:

²⁹ Տե՛ս Հայ պարբերական մամուլի պատմություն (XVIII–XIX դարեր), հ. 1, Գահիրե, 2006, էջ 670–672:

զարյանի, Ս. Սողոմոնյանի, Ս. և Դ. Դավթյանների, Ս. Բաբաջանյանի, Քալանթարյանի, Մատինյանի, «Մելիքյան և ընկերության», «Հայկական աշխարհ», «Կուլտուրա», և Գայանյան վանքի, Բանվորական և այլ տպարաններ:

* * *

Հայկական տպագրության պատմության մեջ միակ կինը, որ 1906 թ. տպարան է ստեղծել, եղել է օր. Նվարդ Աղանյանը: Նրա տպարանը Թիֆլիսում մեծ համբավ է ձեռք բերում, ուր տպագրվել են հայերեն 20 անուն թերթեր ու հանդեսներ: Թիֆլիսում գործած ոչ մի հայկական տպարան այդքան մեծ թվով պարբերականներ չի տպագրել իր գոյության բոլոր տարիներին, ինչքան որ այս տպարանը:

Գյուտ քահ. Աղանյանի նախաձեռնությամբ դեռևս XIX դարավերջերին հիմք է դրվում «Դիվան հայոց պատմության» բազմահատորյակի հրատարակությանը, որի Ա-Բ միացյալ հատորները լույս են տեսել մեկ գրքով՝ 1893-ին, Ա. Շարաձեի տպարանում, Գ հատորը տպագրվել է դրանից մեկ տարի անց՝ 1894-ին, իսկ Դ հատորը՝ 1899-ին, դարձյալ նույն տպարանում: Հետագա հատորների մեծ մասը, արդեն նոր դարասկզբին, տպագրվել է Ն. Աղանյանցի նորաստեղծ տպարանում, ավելի շքեղ ու բարձր կուլտուրայով: Շարքն ավարտվել է ԺԳ հատորով, որը լույս է տեսել 1915-ին, իսկ ԺԲ հատորը տպագրվել է դրանից երկու տարի անց՝ 1917-ին:

Իր գոյության 12 տարիների ընթացքում (1906–1917 թթ.) Ն. Աղանյանցի տպարանում տպագրվել է ավելի քան 600 անուն գիրք: Այդ նույն ժամանակահատվածում «Հերմեսը» լույս է ընծայել 396, «Էպոխան»՝ 171, «Էսպերանտոն»՝ 122, Մ. Մարտիրոսյանցի տպարանը՝ 133, Տ. Ռոտինյանցինը՝ 132, Մ. Վարդանյանինը՝ 82 անուն գրքեր:

Ն. Աղանյանցի տպարանում են տպագրվել նաև Արտաշես Արեղյանի «Աշխարհագրության» դասագրքերի շքեղ հատորները, Արսեն Ղլտձյանի «Կանոնագիրք հայոցը», Ղազարոս Աղայանի «Ուսումն մայրենի լեզվի», Լևոն Շանթի «Հին աստվածները», Դերենիկ Դեմիրձյանի «Բանաստեղծությունները» և այլ գրքեր:

* * *

XX դարասկզբին հիմք են դրվում մի քանի մատենաշարերի, որոնցից են, օրինակ՝ Սահակ-Մեսրոպյան և Ղուկասյան «Մատենադարանները»: Այդ նշագրերով Թիֆլիսի հանրահայտ տպարաններում տպագրվել են հայ մատենագիրների երկերը, դրանց քննական բնագրերը և հայագիտական այլ արժեքավոր աշխատություններ: Շարունակվել են լույս տեսնել ինչպես նախորդ, այնպես էլ նոր ասպարեզ իջած հեղինակների գործերը, դպրոցական դասագրքեր, բժշկական, գյուղատնտեսական ու այլ գիտաճյուղերին նվիրված տեղեկատուներ, եկեղեցական թեմերի, բարեգործական ընկերությունների ու հայրենակցական միությունների հաշվետվություններ, տարեցույցներ, այլմանախներ ու երգարաններ, բանահյուսական փշրանքներ և այլ բնույթի գրքեր: Այդ տարիներին հրատարակված բառարանների շարքում հատկապես աչքի է ընկնում Հ. Դադբաշյանի կազ-

մած «Լիակատար բառարան ռուսերենից հայերեն» երկհատորյակը (1903–1906 թթ.) և հայոց ուսումնարանների համար նրա հեղինակած « Ռուսերենի դասընթացը» (1911 թ.):

Նույն շրջանում են ասպարեզ հանվել Մայաթ-Նովայի, Խ. Աբովյանի, Մ. Նալբանդյանի և ուրիշների անտիպ երկերից շատերը, տպագրվել են Մ. Պեշկոբաշյանի «Տաղերը», Ջիվանու «Քնարն» ու «Արևելյան հեքիաթները», Հովհ. Թումանյանի «Բանաստեղծություններն» ու «Քառյակները», Հ. Հակոբյանի աշխատանքի ու հեղափոխության երգերը և «Նոր առավոտ» պոեմը, Շ. Կուրդինյանի «Արշալույսի դողանջները», Վ. Միրաքյանի «Լավվարի որսը», Ավ. Իսահակյանի «Երգերն ու վերքերը», Վ. Տերյանի «Մթնշաղի անուրջները», Ե. Չարենցի «Կապուտաչյա հայրենիք», Ստ. Ջորյանի «Տխուր մարդիկ» և շատ այլ ժողովածուներ:

1912–1913 թթ. մեծ շուքով են նշվել Հայ գրերի գյուտի 1500 և Հայկական տպագրության սկզբնավորման 400-ամյակները, որոնց նվիրվել են բազմաթիվ աշխատություններ: Այս հոբելյանների առթիվ «Հանրամատչելի Մեսրոպյան գրադարան» մատենաշարով լույս են տեսել մի քանի տասնյակ գրքեր, այդ թվում Սիամանթոյի «Սուրբ Մեսրոպ» պոեմը (1913 թ., տպ. Ն. Ադանյանցի), Լեոյի «Մեսրոպ Մաշտոց» ուղեգրությունը (1914 թ., տպ. «Հերմես»), ինչպես նաև «Սշակ» թերթի խմբագիր, ժամանակի ճանաչված հրապարակախոս ու գիտնական Համբարձում Առաքելյանի «Հանրագիտական բառարան»-ի առաջին հատորը, որով արևելահայ իրականության մեջ հիմք էր դրվում հանրագիտարանային հրատարակչությանը: Նրա տիտղոսաթերթին կարդում ենք. «Հանրագիտական բառարան գրողների, գիտնականների, քաղաքական, հասարակական, կրոնական, պատմական գործիչների, գիտությունների, պատմությունների, աշխարհագրությունների, բաղկացած երկու հատորից, Հատ. 1. Ա-Ն, կազմեց՝ Համբարձում Առաքելյան, Թիֆլիս, տպ. «Էպոխա», 1915»: Սույն հատորի շապիկի վրա, սակայն, տպագրության տարեթիվ է նշված 1912-ը: Երկրորդ հատորը, հեղինակի եղերական վախճանից հետո, այդպես էլ լույս չի տեսել:

Հայ տպագրության պատմությանը և մամուլին նվիրված գրքերի մեջ առանձնանում են Լեոյի «Գրիգոր Արծրունի» եռահատորյակը (1902–1905 թթ.), «Հայկական տպագրությունը» երկհատորյակը (1901–1904 թ.), «Հայ գրքի տօնը» (1912–1913 թթ.) և այլ գրքեր, որոնք տպագրվել են Մ. Մարտիրոսյանցի, Ն. Ադանյանցի, Վրաց հրատարակչական ընկերության և «Հերմես» տպարաններում:

* * *

Ռուսական տպարաններից պետք է հիշատակել Կովկասի փոխարքայության գլխավոր կառավարչության տպարանը, որը իր ստեղծման շրջանից (1804 թ.) մինչև փակվելը՝ (1917 թ.) տպագրել է հայերեն պաշտոնական փաստաթղթեր, թերթեր ու գրքեր: Այստեղ են լույս տեսել Երեմիա Արծրունու «Խնդիր երկաթե ճանապարհի վերա դեպի Հնդկաստան» (1872 թ.), Պ. Ջուբովի «Ղարաբաղի աստղագետը» (1882 թ.), Դաֆֆու «Դավիթ Բեկ» վեպի երկու հատորները (1881–1882 թթ.) և «Խամսայի մելիքություն»

յունները» (1882 թ.) աշխատությունը, Լեոյի «Մելիքի աղջիկը» (1898 թ.): Հայերեն գրքեր ու պարբերականներ են տպագրվել նաև Թիֆլիսի 20-ից ավելի այլալեզու տպարաններում, որոնցից «Կավկազ», «Նադեժդա», «Սլովո», «Բրատստվո», «Էպոխա», «Շորոպան», Բ. Ե. Շապսոնի, Ա. Ա. Միխեյլսոնի, Կ.Պ. Կոզլովսկու, Լ. Գ. Կրամարենկոյի, Գ. Դ. Յուստերդիկի, Բ. Ա. Չանցևի, Կամենպախերի և այլ տպարանները: Օրինակ, «Կավկազ» ռուսական տպարանում է տպագրվել «Նոր Դար» (1884–1908 թթ.) հայերեն թերթը, Գ. Դ. Յուստերդիկի տպարանում՝ Հովհ. Թումանյանի « Շունն ու կատուն» (1908 թ .) և այլն:

Հայերեն թերթեր, գրքեր ու հանդեսներ են տպագրվել նաև վրացական տպարաններում, որոնցից հիշարժան են Վրաց հրատարակչական ընկերության, Ա. Մ. Կերեսելիձեի, Բ. Կիլաձեի, Ս. Մ. Լոսոբերիձեի, Գ. Վ. Չարկվիանու, Մ. Շարաձեի, Է. Բ. Խելաձեի, Ար. Քուրթաթելաձեի, Կ. Թավարթթիլաձեի, «Շրոմա», «Քարթլի», «Ձմորա», «Գ. Ծերեթելի և ընկերություն» տպարանները:

Փոխադարձաբար, Թիֆլիսի հայկական տպարաններում տպագրվել են վրացերեն մի շարք գրքեր ու թերթեր: Դրանցից հատկապես արժե հիշատակել վրաց մամուլի առաջնեկներից մեկը՝ «Յիսկարի» («Արշալույս») հանդեսը (խմբագիր-հրատարակիչներ՝ Գեորգի Էրիսթավի, ապա՝ Բվանե Կերեսելիձե), որը 1852–1853 և 1857–1875 թթ. տպագրվել է Գարրիել Պատկանյանի և Հովհ. Մարտիրոսյանի տպարաններում: Վրաց գրական մամուլի նշանավոր օրգան, Բլիա Ճավճավաձեի խմբագրած «Իվերիա» («Վրաստան») թերթը ևս իր հիմնադրման օրվանից տպագրվել է Համբարձում Էնֆիաճյանցի հայտնի տպարանում (1877–1885 թթ.): Ժամանակին Թիֆլիսի համբավվոր հայկական տպարաններից են լույս տեսել նաև վրաց մամուլի այնպիսի օրգաններ, ինչպիսիք են, օրինակ՝ «Ջեջիլի» (« Արտ», 1890–1917 թթ., խմբագիր-հրատարակիչ՝ Անաստասիա Թումանիշվիլի-Ծերեթելի), «Կվալի» (« Ակոս», 1898–1904 թթ.), «Սաքարթվելոս մոամբե» («Վրաստանի լուրեր», 1863 թ.), « Սաստիլո գազեթի» (« Գյուղական թերթ», 1868–1880 թթ.) պարբերականները և այլն: Ընդհանուր հաշվարկով՝ XIX դարի կեսերից մինչև Վրաստանի խորհրդայնացումը (1921 թ.) Թիֆլիսի հայկական տպարաններում տպագրվել են ավելի քան 20 անուն վրացերեն պարբերականներ և բազմաթիվ գրքեր³⁰:

* * *

Այս ամենից զատ, տպագրական բեղմնավոր գործունեություն են ծավալել հայկական հրատարակչական մի շարք կազմակերպություններ, որոնցից աչքի են ընկնում 1880-ին հիմնադրված «Թիֆլիսի ընկերություն հայերեն գրքերի հրատարակության», որը հետագայում կրում է «Թիֆլիսի հայոց հրատարակչական ընկերություն», իսկ ավելի ուշ՝ «Կովկասի հայոց հրատարակչական ընկերություն» անունը և «Սո. Լիսիցյան և ընկերություն» մասնավոր հրատարակչությունը: Սրանցից «Կովկասի հայոց հրատարակչական ընկերությունը», իր գոյությունը սկսելով XIX դարի

³⁰ Տե՛ս Ա. Յ. Абрамшвили. Грузинская периодика (1819–1917 гг.). Тбилиси, 1968, с. 214–216.

վերջերից, լույս է ընծայել մեծ թվով գեղարվեստական արժեքավոր գրքեր, հատկապես համաշխարհային դասական գրողների երկերի հայերեն թարգմանություններ: Նշված ընկերությունների ստեղծումով Թիֆլիսում գրահրատարակչական գործը դրվում էր ամուր հիմքերի վրա: Նորաստեղծ այդ ընկերությունները, փաստորեն, ձեռագրերի տպագրության նախապատրաստման աշխատանքները կազմակերպում էին գիտական հիմունքներով ու պատշաճ մակարդակով, քան դրանք արվում էին տպարաններում, ոչ մասնագետների կողմից: Այդպիսով՝ տպարաններն աստիճանաբար դառնում էին սոսկ տպագրության հետ կապված տեխնիկական աշխատանքներ կատարող հաստատություններ՝ զրկվելով մշակութային կարևոր օջախներ լինելու իրենց մենաշնորհից:

Մեկ հարյուրամյակի ընթացքում Թիֆլիսում գործած ավելի քան չորս տասնյակ հայկական տպարաններից մի քանիսն աչքի էին ընկնում իրենց տպագրական բարձր կուլտուրայով ու նորագույն ճարտարվեստով: Եվրոպայից այստեղ էին բերվում տպագրական նոր սարքավորումներ, էլեկտրական մեքենաներ, լավագույն տառատեսակներ: Այս տեսակետից աչքի էին ընկնում Մ. Մարտիրոսյանցի և Ն. Աղանյանցի տպարանները, որոնց հրատարակած գրքերն ու թերթերը տպագրական արվեստով ու ձևավորմամբ մրցում էին Ռուսաստանի ու Եվրոպայի լավագույն տպարանների արտադրանքի հետ³¹:

Այստեղ անհրաժեշտ է նշել այն մեծ դերը, որ Թիֆլիսի տպարանների զարգացման համար խաղացել է գերմանացի Մադերի ձուլարանը, որտեղ բազմաթիվ փորձեր են արվել հայկական տպատառերին տալու հարմար և գեղեցիկ ձևեր: Մակայն Մադերն այդ գործում շոշափելի հաջողության չի հասնում, և հայերեն տառերի փարիզյան ձևերը դարձյալ մնում են անգերագանցելի: Հենց այդ ձևերի բազմացմանն էլ զարկ է տալիս Մադերն իր ձուլարանում: Իսկ Գ. Դ. Յուստերդիկի, Շահբազյանի, Կ. Մեսիխի և Կովկասի զինվորական-տեղագրական բաժանմունքի տպարաններին կից գործում էին վիմագրատներ, որոնցում մասնագետ վարպետների կողմից գրքերի ու մամուլի համար պատրաստվում էին գծանկարների և ծաղրանկարների բարձրորակ փորագրություններ, որոնք տպագրվում էին դասագրքերի, արվեստագիտական ու երգիծական պարբերականների էջերում ու գեղարվեստական հրատարակություններում:

Թիֆլիսում մեծ վերելք է ապրել նաև գրքի ձևավորման, լուսանկարչության, ցինկոգրաֆիկայի ու գծանկարչության արվեստը: Այստեղ գործել են այդ բնագավառների հայ, ռուս, վրացի և արտասահմանցի, ճանաչված վարպետներ, նշանավոր գեղանկարիչներ, ինչպիսիք են, օրինակ՝ Ն. Փիրոսմանիշվիլին, Լ. Գուդիաշվիլին, Մ. Զիչին, Գ. Երիցյանը, Վ. Կիլաձեն, Գ. Բաշինջաղյանը, Մ. Թոխձեն, Տարագրոսը (Տ. Ս. Տեր-Վարդանյան), Օ. Շմեդլինգը, Գ. Շարբաբյանը, Կ. Ռոտտերը, Ա. Կոջոյանը³² և ուրիշներ, որոնք մեծապես խթանել են տպագրության զարգացմանը Վրաստանում:

³¹ Ռ. Բշխունյան. նշվ. աշխ., էջ 143:

³² Գծանկարիչ Արամ Կարապետի Կոջոյանը (1889–1964) ականավոր գեղանկարիչ Հակոբ Կոջոյանի (1883–1959) կրտսեր եղբայրն է, նրանց ընտանիքը Ախալցխայից Հյուսիսային Կովկաս տեղափոխվելուց հետո ծնվել է Վլադիկավկազում, ուսումնառությունը ստացել Թիֆլիսի գեղարվեստից ակադեմիայում (1930 թ.), այնուհետև մինչև իր կյանքի վերջը ապրել

Թիֆլիսը, որպես հայ մշակույթի խոշոր կենտրոն, XX դարի սկզբներին մեծ հեղինակություն էր վայելում: Այստեղ էին ձևավորվում կուսակցությունները, խմորվում գիտական ու հասարակական միտքը, զարգանում էր գրականությունն ու արվեստը: Այդ ամենի առաջընթացին մեծապես նպաստում էր տպագիր իտսքը, որը կյանք էր առնում տպարանների միջոցով:

Այսպիսով, Թիֆլիսում XIX դարում և XX դարասկզբին գործել են ավելի քան չորս տասնյակ հայկական տպարաններ, ինչպես նաև շուրջ երկու տասնյակ օտարալեզու (նաև հայերեն գրքեր տպագրող) տպագրատներ, որոնք ընդհանուր հաշվարկով տպագրել են 4430 անուն գրքեր ու 200- ից ավելի պարբերականներ: Ըստ հայ գրատպության ընդունված պարբերացման՝ թիֆլիսահայ գրատպությունն ունի հետևյալ պատկերը. էթե 1823–1850 թթ. տպագրվել է ընդամենը 53 անուն գիրք³³, ապա հետագա հիսուն տարում՝ 1851–1900-ը՝ 1670 անուն³⁴, 1901-ից մինչև 1920-ը ընկած ժամանակահատվածում էլ 2770 անուն գիրք³⁵, 1057 անունով ավելի, քան նախորդ ամբողջ դարում տպագրված 1723-ը:

Հարկ է հատուկ նշել, որ մեկ հարյուրամյակի ընթացքում Վրաստանում մեծ ծաղկում ապրած հայկական տպագրական գործն իր բարերար ազդեցությունն է թողել ինչպես Թիֆլիսում, այնպես էլ զավառներում հիմնադրված վրացական, ռուսական, թուրքական ու այլատառ տպարանների գործունեության աշխուժացման և գրքի ու մամուլի տպագրության զարգացման վրա:

АРМЯНСКОЕ КНИГОПЕЧАТАНИЕ В ТИФЛИСЕ

(XIX век – начало XX века)

ВЛАДИМИР МАГАЛҮЯН

Резюме

Первые опыты создания армяно-грузинской типографии в Тифлисе имели место в конце XVII века при грузинском царе Арчиле. Дело царя Арчила в XVIII веке продолжил царь Вахтанг VI, основавший в 1709 г. в Тифлисе первую в Закавказье грузинскую типографию. Но деятельность этой типографии прервалась в результате вторжения иноземных захватчиков. Она была возобновлена благодаря выдающемуся армянскому печатнику Погосу Ованнисяну (Арапян, 1742–1835), прибывшему из Константинополя в Тифлис по приглашению

ու աշխատել է Թբիլիսիում՝ գրադրվելով գրաֆիկայով ու մանկավարժությամբ, ձևավորել է Թբիլիսիում հրատարակված բազմաթիվ հայերեն գրքեր ու պարբերականներ: Նրա լավագույն աշխատանքներից են «Թիֆլիսյան պատկերներ» շարքը, Շոթա Ռուսթավելու, Ակակի Ծերեթելու դիմանկարները և այլ գործեր: Վախճանվել ու թաղվել է Թբիլիսիում (տե՛ս Դ ա ն ի է լ Դ գ ն ու ի ի. Հայ կերպարվեստագետներ (համառոտ բառարան), Երևան, 1977, էջ 235):

³³ Տե՛ս Հայ գիրքը 1801–1850 թվականներին, Երևան, 1967, էջ 523:

³⁴ Տե՛ս Հայ գիրքը 1851–1900 թվականներին, Երևան, 1999, էջ 827–829:

³⁵ Տե՛ս Հայ գիրքը 1901–1920 թվականներին, Երևան, 2007, էջ 789–793:

царя Ираклия Второго. Его усилиями в 1774 г. Вахтанговская типография была не только восстановлена, но и усовершенствована. В это время Погос Арапян наряду с грузинской типографией в Тифлисе хотел создать и армянскую. Но неожиданное ухудшение военно-политической ситуации в Закавказье сорвало эти намерения.

Вопрос создания армянской типографии в Тифлисе вновь встал после присоединения Грузии к России в 1801 г., когда на основе единственной грузинской типографии в 1804 г. в Тифлисе была организована типография русского наместничества. В этой типографии наряду с русским и грузинским печатались указы и решения, а позднее и книги на армянском языке.

Чисто армянскую типографию в Тифлисе в 1819 г. основал Геворк Арцруни, в которой в 1823 г. было издано, первое армянское печатное издание в Грузии – книга врача Давида Мкртчяна (Карбеци) о холере. 1825 г. эта типография была передана новообразованной Нерсисяновской школе. За сороколетнюю историю существования этой типографии были изданы многочисленные книги и две газеты. В дальнейшем в Тифлисе были основаны и другие армянские типографии, среди которых выделялись высоким качеством своей продукции типографии братьев Акопа и Давида Арзаянцев (1838–1843 гг.), Г. Паткяна (1850–1853 гг.), А. Энфиячянца (1859–1890 гг.), М. Ротинянца, А. Мартиросянца, Т. Назарянца, М. Варданянца, М. Акопяна и многих других. А уже в начале XX века, до установления советской власти в Грузии (25 февраля 1921 г.) в Тифлисе действовали более 40 армянских типографий.

Большую известность в Тифлисе снискала типография единственной женщины-печатницы Нвард Аганянц. За время ее существования (1906–1917 гг.) в этой типографии были напечатаны сотни ценных книг и более 20 наименований газет и журналов. Кроме армянских типографий, печатание армянских книг и периодики осуществлялось в грузинских и русских типографиях (около 20), точно так же, как в армянских типографиях, печатались грузинские и русские издания.

В течение ста лет из этих типографий по приблизительным подсчетам, вышло около 4430 наименований книг: в 1823–1850 гг. – 53, в 1851–1900 гг. – 1670, а в 1901–1921 гг. – 2770. Помимо книг было выпущено также более 200 наименований периодических изданий на армянском языке, что свидетельствует о расцвете армянского печатного дела в Грузии.

ARMENIAN TYPOGRAPHY IN TIFLIS (The 19th century – the beginning of the 20th century)

VLADIMIR MAGHALYAN

S u m m a r y

Attempts of Armenian - Georgian typography in Tiflis were first made by Georgian King Archil at the end of the 17th century and continued in the 18th century, especially during the reign of King Vakhtang VI, who founded in 1709 in Tiflis the first Georgian typography in

Trancaucasia. On Irakli II's invitation Poghos Hovhannisyan (Arapyan, 1742–1835) – a highly merited person and a professional printing master came from Constantinople to Tiflis to restore the Georgian printing house destroyed by foreign invaders (1774). At that time Poghos Arapyan wanted to establish Armenian printing house along with the Georgian one. But the unexpected worsening of military-political situation in Transcaucasia frustrated these intentions.

The question of establishing Armenian printing house in Tiflis was once again raised after Georgia had entered the composition of Russia (1801), when in 1804 on the basis of the only Georgian printing house the printing house of the Russian Administration was organized and continued to function until 1917. In that printing house along with Russian and Georgian official decrees and directives and later also books were published in Armenian.

An Armenian printing house proper was founded in 1819 in Tiflis by Grigor Artsrouni and presented to the newly-created Nersisyan School in 1925. In 1823, in that printing house doctor David Mkrtychyan's (Karbetsi) work on cholera was published which is considered to be the first Armenian book published in Georgia ever since. Later, throughout 40 years of its existence the printing house printed numerous valuable books.

Later more than 40 Armenian printing houses were founded in Tiflis, among them Hakob and David Arzanyants brothers' (1838–1843), G. Patkanyan's (1850–1853), H. Enfiayants' (1859 – the 1890s), then M. Rotinyants', H. Martirosyants', T. Nazaryants', M. Hakobyan's, M. Vardanyan's and many others' famous printing houses, that struck one's eye for their high quality products. Printer Nvard Aghanyants' printing house had also a great reputation for throughout its existence (1906–1917), it released hundreds of valuable books and more than 20 periodicals. In Tiflis numerous Armenian books and newspapers were also published in about 20 printing houses in other languages.

Throughout a hundred years according to approximate calculations about 4430 books were published, thus – 53 books in 1823–1850; 1670 books in 1851–1900 and 2770 books in 1901–1920. Along with these books more than 200 Armenian periodicals were published, something that shows the expansion and flourishing of Armenian printing in Georgia.